ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/124

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Բողոք բերող՝ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

«Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Ա. Աբգարյանի

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Ավանեսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 15.12.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 15.12.2020թ.-ին:

15.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/124 համարի ծածկագիրը:

22.12.2020թ.-ին, 29.12.2020թ.-ին և 14.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 29.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 14.01.2021թ.-ին:

2. **<u>«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն 15.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ն (Այսուհետ՝ Պատվիրատու) համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգ (Այսուհետ՝ Ընթացակարգ), որը հրապարակվել է սույն թվականի նոյեմբերիի 27-ին ժ 16:46:36-ին, www.gnumner.am կայքում, այնուհետև փոփոխվել սույն թվականի դեկտեմբերի 1-ին ժ 11:15:13-ին:

Հրավերով սահմանվում է, որ այն կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի ՀՀ ԱՆ «Թոքաբաեության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝

պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մեր ընկերությունը լինելով ՀՀ-ում բժշկական սարքավորումների առաջատար մատակարարներից մեկը, նույնպես հետաքրքված էր վերոհշյալ մրցույթով, սակայն հրավերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումների գործընթացը կարգավորող ակտերի խախտումներ:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն

«Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարվելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

«Գնումների պլանը, ներառյալ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հատ ատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝

«Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում»:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝

«Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է»:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝

«Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

Մեր ընկեյությունը տեղեկագրում չգտավ Պատվիրատուի գնումների պլանը կամ դրա փոփոխությունը, որը կներառեր այս մրցույթով նախատեսված սարքավորումը:

Այսպիսով գանում ենք, որ Պատվիրատուն գնման գործընթացը կազմակերպել է խախտումներով, մասնավորապես խախտել է Օրենքի 15-րդ 6-րդ մասը, ինչպես նաև Կարգի 16-րդ և 18-րդ կետերը:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընկերությունը 22.12.2020թ.-ին «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/124 ծածկագրով բողոքի շրջանակներում ներկայացրած պատասխանի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից ի պատասխան ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև տեղեկագրում հրապարակված տեղեկատվության համադրման արդյունքում, պարզ է դառնում, որ գնման առարկան ներառված է եղել գնման պլանում, սակայն պլանը կազմվել է «Գնումների պլանի ձև, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2017թ. ապրիլի 13-ին ընդունված N 390-Ն որոշման խախտումներով, մասնավորապես՝

Հավելված 1-ով հաստատված պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվելիք գնումների պլանի ձևի (տեսնել ստորև).

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2017 թվականի
ապրիլի 13-ի N 390-Ն որոշման

Ձ Ե Վ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ

Պատվիրատու ----------						
(ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման)						
Ծրագիրը						
Անվանումը ----------						
բաժին -- խումբ -- դաս – ծրագիր --						
(ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման)						
Գնման առարկայի		*Գնման ձևը*	*Չափի միավորը*	*Միավորի գինը*	*Քանակը*	*Գումարը (հազ. դրամ)*
միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	*անվանումը*					
	ապրանքներ					
	--					
	աշխատանքներ					
	--					
	ծառայություններ					
	--					
	ընդամենը					

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար *Դ. Հարությունյան*

Հավելված 3-ով սահմանված գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման կարգի 2-րդ մասի 2-րդ կետի առաջին ենթակետի՝

«2. Գնումների պլանի՝

1) 1-ին և 2-րդ սյուներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան».

և Հավելված 4-ով սահմանված գնումների միասնական անվանացանկի կառուցվածքի 1-ին կետի 2-րդ ենթակետի՝

«1. Գնումների միասնական անվանացանկը կազմված է ութ նիշ ունեցող թվային ծածկագրից, որը փոխկապակցված է գնման առարկա հանդիսացող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանման հետ: Թվային ծածկագիրն ունի չորս մակարդակ...:

Ընդ որում՝

2) երկրորդ մակարդակը՝ խումբը, ցույց է տալիս բաժնում ապրանքի, աշխատանքի կամ ծառայության անվանախումբը (XXX00000).

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Պատվիրատուն գնման առարկան ներառել է ծառայությունների անվանախմբում՝ խախտելով N 390-Ն որոշմամբ հաստատված գնման պլանի ձևը և լրացման կարգը, ուստի նման ծավալուն գնման պլանում (որտեղ «որոնում» գործիքը չի աշխատել ելնելով ֆայլի ձևաչափից), որտեղ հստակ դասակարգված էին ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ըստ խմբերի, մեզ հետաքրքրող գնման առարկան փնտրել ենք «ապրանքներ» խմբում և բնականաբար չենք գտել:

Այսպիսով՝ գտնում ենք, որ Պատվիրատուն գնման գործընթացը կազմակերպել է խախտումներով, ուստի ևս մեկ անգամ խնդրում ենք պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով բաց հրատապ մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել ընթացակարգը:»:

Ընկերությունը 25.12.2020թ.-ին «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/124 ծածկագրով բողոքի շրջանակներում ներկայացրած երկրորդ դիրքորոշման վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Պնդում ենք, որ Պատվիրատուն՝ հանդիսանալով Առողջապահության նախարարության ենթակայության կառույց, պետական կազմակերպություն, պարտավոր էր գործել միայն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, մասնավորապես՝ սույն բողոքի շրջանակներում՝ «Գնումների պլանի ձև, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2017թ. ապրիլի 13-ին ընդունված N 390-Ն որոշմամբ սահմանված կարգով: Պատվիրատուն գնման առարկան ներառելով ծառայությունների անվանախմբում՝ ոչ թե լրացրել որոշակի տարբերությամբ, այլ հստակ խախտել է վերոնշյալ կարգը, ինչը միանշանակ հանգեցրել է գնման պլանի ոչ

իրավաչափ լինելուն: Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն ձևակերպանը, որ որոշմամբ սահմանված էական նշանակություն ունեցող դրույթները պահպանվել են, ապա ի հակադրումն դրա, պնդում ենք, որ ՀՀ Կառավարության 2017թ. ապրիլի 13-ին ընդունված N 390-Ն որոշմամբ սահմանված կարգը բաղկացած է 4 հավելվածներից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և դրանցից յուրաքանչյուրի դրույթները նույնքան էական են որքան մյուսները:

Տվյալ պարագայում Մասնակցի համար ստեղծվել է անհարկի խոչընդոտ՝ Ընթացակարգին առնչվող և հասանելի, ամբողջական տեղեկատվություն ստանալու համար:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է հետևյալը՝

«Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այսպիսով՝ գտնում ենք, որ Պատվիրատուն գնման գործընթացը կազմակերպել է խախտմամբ, ուստի ևս մեկ անգամ խնդրում ենք պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով բաց հրատապ մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել ընթացակարգը:»:

3. **<u>«Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 15.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/18735-2020 գրությամբ դիմել է «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 15.12.2020թ.-ին

ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 16.12.2020թ.-ին ներկայացված թիվ 551 գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2020 թվականի 15 դեկտեմբերի գրության, ներկայացնում եմ ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ նաև՝ Կենտրոն) կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/124 ծածկագրով բողոքի վերաբերյալ դիրքորոշումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները:

Կենտրոնի կարիքների համար համակարգչային տոմոգրաֆիայի սկաների (այսուհետ նաև՝ Գնման առարկա) ձեռքբերման նպատակով 27.11.2020 թվականին N ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85 ծածկագրով՝ բաղկացած մեկ չափաբաժնից, թղթային ձևով հայտարարվել է հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), այնուհետև հրավերում կատարվել է փոփոխություն, փոփոխված հրավերը և հրավերի փոփոխության մասին հայտարարությունը gnumner.am կայքում հրապարակվել են 01.12.2020 թվականին: Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի»:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 16-րդ կետի՝ «Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում»:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ «Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է»:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ «Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

Համաձայն Կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի գնահատող հանձնաժողովի «անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար»:

Գնման գործընթաց սկսելու համար Գնման առարկան ԳՄԱ դասակարգման 33111470 միջանցիկ ծածկագրով 24.11.2020 թվականին Օրենքի 15-րդ հոդվածի 6 մասի և Կարգի 18-րդ կետի համաձայն՝ առանց գնման ընդհանուր գումարի ներառվել է Կենտրոնի պետական միջոցների հաշվին գնումների պլանում, որը հաստատվել և հրապարակվել է պաշտոնական տեղեկագրում նույն օրը: Այնուհետև հաջորդող աշխատանքային օրը սահմանվել է պատասխանատու ստորաբաժանում և գնումները համակարգող, ստորաբաժանումը գնման հայտը հաստատել և ներկայացրել է գնումները համակարգողին, ձևավորվել է գնահատող հանձնաժողով, որը հաստատել է հրավերը (փոփոխությունը) և ներկայացրել է տեղեկագրում հրապարակման, այսինքն գնման գործընթացը համարվել է սկսված:

Վերոնշյալ փաստական հանգամանքների հիման վրա Կենտրոնի կողմից Մրցույթը կազմակերպվել է իրավական հիմքի առկայության պայմաններում: Կարգի 16-րդ կետի իմաստով, գնումների պլանը հաստատված և հրապարակված է, Գնման առարկան

ներառված է պլանում: 18-րդ կետի իմաստով, Գնման առարկան ներառված է պլանում Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման:

Ինչ վերաբերվում է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից բողոքում նշված այն հանգամանքին, որ տեղեկագրում չի գտնվել հրապարակված գնումների պլանը, կամ դրա փոփոխությունը, որը կներառեր մրցույթով նախատեսված սարքավորումը, նշեմ հետևյալը՝ հրավերի հայտարարությամբ սահմանվում է, որ սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղարին: Այսինքն, Ընկերությունը հրապարակված գնումների պլանի առակայության և Գնման առարկան պլանում ներառված լինելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար կարող էր դիմել քարտուղարին, որը տեղի չի ունեցել:

Հատկանշական է այն, որ Ընկերությունը բողոքը ներկայացրել է հայտերի բացման օրը՝ այն ինչ ուներ 15 օր ժամանակահատված, պարզելու գնումների պլանի առկայության վերաբերյալ տեղեկությունը:

Ամփոփելով վերոնշյալ փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Կից ներկայացնում եմ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները.»:

Պատվիրատուն, ի լրումն «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի 16.12.2020թ.-ի թիվ 551 գրության և ի պատասխան «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացված դիրքորոշման հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամաբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգի» (այսուհետ նաև՝ Որոշում) 2-րդ կետի.

1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ նաև՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան,

2-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինն անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է,

3-րդ ենթակետի համաձայն՝ 4-րդ սյունակում լրացվում է «հատ» բառը եթե գնման առարկան ձեռք է բերվելու ըստ քանակի…,

4-րդ ենթակետի համաձայն՝ 5-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մեկ միավորի գինը.

5-րդ ենթակետի համաձայն՝ 6-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության քանակը: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Քանակը» սյունակում նշվում է «1» թիվը.

6-րդ ենթակետի համաձայն՝ 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Միավորի գինը» սյունակում նշված գումարը հավասար է 7-րդ սյունակում նշված գումարը բաժանած հազարի: Հակառակ դեպքում 7-րդ սյունակում նշվում է «Միավորի գինը» և «Քանակը» սյունակների արտադրյալը բաժանած հազարի:

Նույն Որոշման 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ գնումների պլանում փոփոխությունները կատարվում են սույն կարգի 2-րդ կետով սահմանված պայմաններով լրացումներ կատարվելու ձևով: Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:

Կենտրոնի կողմից 24.11.2020 թվականին հաստատված և հրապարակված գնումների պլանում Գնման առարկան ներառվել է Որոշմամբ սահմանված դրույթներին համապատասխան.

1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին և 2-րդ երկրորդ սունյակներում համապատասխանաբար լրացված են ԳՄԱ միջանցիկ ծածկագիրը՝ 33111470, անվանումը՝ համակարգչային տոմոգրաֆիայի սկաներ՝ 4-րդ մակարդակին համապատասխան,

2-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ սյունակում լրացված է գնման ձևը՝ ՀԲՄ,

3-րդ ենթակետի համաձայն՝ 4-րդ սյունակում լրացված է չափման միավորը՝ հատ,

4-րդ ենթակետի համաձայն՝ 5-րդ սյունակում նշված է գնման ենթակա ապրանքի մեկ միավորի գինը՝ 155 000 000 ՀՀ դրամ,

5-րդ ենթակետի համաձայն՝ 6-րդ սյունակում նշվծ է գնման ենթակա ապրանքի քանակը՝ 1,

7-րդ սյունակում ապրանքի ընդհանուր գումարը նշված չէ, քանի որ Գնման առարկան ներառվել է գնումների պլանում Կարգի 18-րդ կետի համաձայն:

Հարկ եմ համարում նշել, որ թեև Գնման առարկան ներառվել է գնումների պլանում ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի թիվ 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման» կարգի գնումների պլանի ձևի որոշակի տարբերությամբ, այն է Գնման առարկան հանդիսանալով ապրանք ներառվել է ծառայություններ խմբում, սակայն այդ տարբերությունը չի կարող հանգեցնել գնումների պլանի ոչ իրավաչափ լինելու հանգամանքին: Նշված որոշմամբ սահմանված էական նշանակություն ունեցող՝ գնումների պլանի ձևին և բովանդակությանը վերագրվող դրույթները պահպանված են:»:

4. **ԳԲՔԱ-ԼՕ**-2020/124 **բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով 27.11.2020թ.-ին հայտարարվել է «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթի հրավերում 01.12.2020թ.-ին կատարվել է փոփոխություն և հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 15.12.2020թ.-ի ժամը 12:00-ն ներառյալ:

iii. Մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

iv. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ համակարգչային տոմոգրաֆիայի սկաներ սարքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 33111470:

v. Նույն հավելվածի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի համար համապատասխան ֆինանսական միջոցներ

նախատեսվելուց հետո, լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից՝ 90 օրացույցային օրվա ընթացքում բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագրի մատակակարումը սկսել ավելի կարճ ժամկետից:

vi. www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթում ձեռքբերվելիք գնման առարկան, սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով, ներառվել է 2020թ.-ի գնումների պլանում:

vii. Գնումների պլանի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ համակարգչային տոմոգրաֆիայի սկաներ սարքը, գումարը նշված է՝ 155 000 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 33111470:

viii. Գնումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվել և հրապարկվել է www.gnumner.am կայքում՝ 24.11.2020թ.-ին:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 15.12.2020թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 2-րդ կետի.

1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան,

2-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինն անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է,

3-րդ ենթակետի համաձայն՝ 4-րդ սյունակում լրացվում է ... «դրամ» բառը, եթե սույն ենթակետի «ա»-«ժթ» ենթակետերում նշված չափման միավորներից որևէ մեկը կիրառելի չէ,

4-րդ ենթակետի համաձայն՝ 5-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մեկ միավորի գինը,

5-րդ ենթակետի համաձայն՝ 6-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության քանակը: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման

միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Քանակը» սյունակում նշվում է «1» թիվը,

6-րդ ենթակետի համաձայն՝ 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Միավորի գինը» սյունակում նշված գումարը հավասար է 7-րդ սյունակում նշված գումարը բաժանած հազարի: Հակառակ դեպքում 7-րդ սյունակում նշվում է «Միավորի գինը» և «Քանակը» սյունակների արտադրյալը բաժանած հազարի:

Նույն կարգի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ գնումների պլանում փոփոխությունները կատարվում են սույն կարգի 2-րդ կետով սահմանված պայմաններով լրացումներ կատարվելու ձևով: Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ բացառելով նաև միավոր գումարի նշումը: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հրատապ բաց մրցույթ հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում 1 հատ համակարգչային տոմոգրաֆիայի սկաներ սարքը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33111470: www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթում ձեռքբերվելիք գնման առարկան, սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով, ներառվել է 2020թ.-ի գնումների պլանում, որի համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ համակարգչային տոմոգրաֆիայի սկաներ սարքը, գումարը նշված է՝ 155 000 000 ՀՀ դրամ և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է 33111470: Գնումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվել և հրապարկվել է www.gnumner.am կայքում՝ 24.11.2020թ.-ին:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգը կազմակերպվել է գնումների պլանի՝ առկայության պայմաններում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ թե պլանով և թե հրավերով Ընթացակարգի 1-ին չափաբաժնով սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով ապրանքը նշվել է համակարգչային տոմոգրաֆիայի սկաներ սարքը, որի համար նախատեսված քանակը նշվել է 1, գումարը՝ 155 000 000, միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ՝ 33141174:

Սակայն, տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հրատապ բաց մրցույթը հայտարարելով Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի՝ 1 հատ համակարգչային տոմոգրաֆիայի սկաներ սարքի համար 24.11.2020թ.-ին հաստատված և www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով (փոփոխություններով) նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրով՝ 33141174, նախատեսված 155 000 000 ՀՀ դրամ գումարի չափով ֆինանսական միջոցներ, որպիսի պայմաններում օրենքի վերոնշյալ հոդվածի կիրառումը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ամբողջացնելով վերը թվարկված հանգամանքները և դրանք դիտարկելով Կարգի 16-18-րդ կետերի դրույթների համատեքստում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ սույն դեպքում Հանձնաժողովի կողմից կազմակերպված առանց ֆինանսական միջոցների նախատեսման գնման ընթացակարգը/մրցույթը, կազմակերպվել է առանց իրավական հիմքի: Սույն դեպքում, Կարգի 16-րդ կետի իմաստով, գնման առարկան՝ գնման ընդհանուր գումարի նշմամբ ներառված է գնումների պլանում, որը հաստատված և հրապարակված է՝ սահմանված պահանջներին համապատասխան: Սակայն Հանձնաժողովի կողմից գնման գործընթացը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, այն է՝ առանց ֆինասական միջոցների առկայության, որպիսի պարագայում, Կարգի 18-րդ կետի իմաստով, գնման գործընթացը/մրցույթը պետք է կազմակերպվեր գնումների պլանում գնման առարկայի՝ առանց գնման ընդհանուր և միավորի գումարի նշման, և պայմանով, որ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում կկատարվի համապատասխան լրացում:

Վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Հանձնաժողովը, մինչև գնման գործընթաց սկսելը, նախ՝ պետք է վերջնականապես հստակեցնի ֆինանսական միջոցների առկայությունը կամ բացակայությունը, այնուհետև նոր միայն սկսի գնման գործընթացը, և երկրորդ՝ համակարգչային տոմոգրաֆիայի սկաներ սարքի համար 24.11.2020թ.-ի դրությամբ՝ նախքան մրցույթի հրավերը հայտարարելը, նախատեսված 155 000 000 ՀՀ դրամ գումարի առկայությունն արդեն իսկ բացառում է գնումը կատարել (գործընթացը հայտարարել) Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց ֆինանսական միջոցների առկայության:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հրատապ բաց մրցույթն Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, կազմակերպվել և գնման գործընթացը սկսվել է առանց իրավական հիմքի, քանի որ, ինչպես վերը նշվեց, հաստատված գնումների պլանում ներառված գնման առարկան նշված է գնման ընդհանուր գումարով, որպիսի պայմաններում «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման՝ գնման ընթացակարգը պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի կողմից 15.12.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/124 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՀՀ ԱՆ «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից համակարգչային տոմոգրաֆիայի սկաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԹԱԿ-ՀԲՄԱՊՁԲ-20/85» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**